**ԷՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

***ԵՊԿ բակալավրական 4-րդ կուրսի խմբավարության բաժնի ուսանող***

***Ղեկավար՝ դոցենտ, արվեստագիտության թեկնածու, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դոցենտ Անահիտ Հովհաննեսի Բաղդասարյան***

# *ԽՄԲԱՎԱՐ՝ Խ. ՄԵՅԽԱՆԵՃՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ ԿՅԱՆՔԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ*

*Մեր հաղորդման համար աղբյուր են հանդիսացել՝ 1970-ական թվականների սկզբին, Հայաստանյան առաջատար մամուլում՝ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում (1. էջ 8)՝ կոմպոզիտոր Երվանդ Երկանյանի «Երիտասարդ խմբավարը»՝ խորագրով, և "Коммунист" ռուսալեզու օրաթերթում (2. էջ 4) հայտնի երաժշտագետ Մեդա Թաշչյանի "Дебют молодого дирижера" խորագրով հոդվածները: Նաև Շողակաթ հեռուստալիքի կողմից պատրաստած հարցազրույցը խմբավարի* հետ, ինչպես նաև անձնական զրույցները դիրիժոր և խմբավար Կարեն Սարգսյանի և մեր մասնագիտական դասարանի պրոֆեսոր Դավիթ Ղազարյանի հետ:*

*Մեր խմբավարական ուսումնառության առիթով անդրադարձանք խմբավար, կոմպոզիտոր, Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի՝ «Կապպելլայի» երկարամյա երկրորդ խմբավար, նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երգչախմբի բազմամյա դպրապետ, Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական հանրապետության վաստակավոր արտիստ՝ Խորեն Մեյխանեճյանի հեղինակած բազմաձայն Պատարագին, որը հայտնի է որպես՝ «Խորէնեան պատարագ»:*

*Հետաքրքրություն առաջացավ նաև խմբավարի կյանքի և գործունեության նկատմամբ: Չնայած այն հանգամանքին, որ նա մինչև 90-ական թվականներին հայտնի երաժիշտ էր Հայաստանում և այլուր, ուներ իր լսարանը, սակայն մեր օրերում քչերին է ծանոթ նրա անունը և նրա ծավալած գործունեությունը, նաև խիստ սահմանափակ են նյութերը խմբավարի մասին: Ուստի փորձեցինք նախ համառոտ ներկայացնել Մեյխանեճյանի** կյանքը և ստեղծագործական ուղին:*

*Խորեն Մեյխանեճյանը ծնվել է 1937 թ.՝ Սիբիրի Հալեպ հայաշատ քաղաքում: 1946-ին հայրենադարձվել է: 1956-1960 թթ. հաճախել է Գևորգյան Ճեմարան՝ ուսումնասիրելով Հայ Եկեղեցու Աստվածաբանությունը, իմաստասիրությունը, հոգեբանությունը և արվեստը: 1965-ին ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի խմբավարական բաժինը՝ սովորելով Թաթուլ Ալթունյանի մասնագիտական դասարանում: Երաժշտատեսական գիտելիքներ է ստացել, ի թիվս այլ ուսուցիչների, նաև Ռոբերտ Աթայանի ղեկավարությամբ:*

*Խորեն Մեյխանեճյան*

*Իսկ 1961 թ. սկսել է աշխատել, որպես երկրորդ խմբավար՝ Հայաստանի Պետական Ակադեմիական երգչախմբում, Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ:*

*1975-1979 թթ. վերադարձել է Երևանի Պետական կոնսերվտորիա, որտեղ ստացել է իր երկրորդ կրթությունը՝ իբրև օպերային և նվագախմբային դիրիժոր:*

*1980-ական թվականներին Խ. Մեյխանեճյանը, լինելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դպրապետը՝ Վազգեն Ա Պալճեան Հոգելույս կաթողիկոսի հորդորով և հանձնարարությամբ ձեռնամուխ եղավ բազմաձայն Պատարագի ստեղծմանը, որը 1984 թ. կաթողիկոսի կոնդակով (հրամանով) վավերացվեց, որպես «Խորենէան Պատարագ»: Այն գրված է խառը քառաձայն երգչախմբի «մենակատարների և երգեհոնի համար»:*

---

* 2016 թ. մարտ:

** Խմբավարի կենսագրության վերաբերյալ նյութերը քաղել ենք. «Երգեցողութիւնք Սուրբ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ», «Խորէնեան Պատարագ», Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Դպրաց Դասերու Միութիւն, 1999, «Խորէն Մէյխանէճեան»: Տե՛ս նաև (3. էջ 8-11):

* Զեկուցումն ընթերցվել է ԵՊԿ-100-ամյակին նվիրված ԵՊԿ ՈՒԳՍԸ գիտաժողովի շրջանակներում: Երաշխավորվել է հրատարակության ԵՊԿ խմբագրական խորհրդի առաջարկով:

*Նշենք, որ «Խորենէան Պատարագը» համարվում է՝ «Հայկական պատարագներու երաժշտական տարբերակներու շղթայի կարեւոր մէկ օղակը» (Ժիրայր Ռեհյան՝ սփյուռքահայ երաժիշտ, հայկական պատարագի հետազոտող, նաև Սիրիայի Արաբական Հանրապետության պետական և տեղի հայ ազգային նշանավոր գործիչ) (4. էջ 462):*

*1999 թ. Հայ Եկեղեցու դպրաց դասերի ընկերակցությունը հրատարակեց «Խորենեան Պատարագը»-ը Վազգեն Ա Կաթողիկոսի վախճանի տարելիցի կապակցությամբ: «Խորենէան Պատարագը» բարձր գնահատվեց ժամանակի հայ երաժշտագետների կողմից:*

*1991 թ. Մոսկվայի կենտրոնական կառավարությունը խմբավար Խորեն Մեյխանեճյանին շնորհել է «Գերազանց ուսուցչապետի» տիտղոսը:*

*1993 թ. մեկնել է ԱՄՆ, մշտական բնակության նպատակով: Այժմ Խորեն Մեյխանեճյանը «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան Թեմի առաջնորդանիստ Սուրբ Վարդան Մայր Տաճարի դպրաց դասի խմբավարն է: Եվ դրանով իսկ հետևում և կարգավորում է նույն թեմի հայոց եկեղեցիների ծիսաարարողակարգի երաժշտական բաղադրիչը:*

*2007-ին լույս է տեսնում Մաեստրո Մեյխանեճեանի ստեղծագործությունների ժողովածուն՝ «Կյանքիս երգերը» խորագրով: Ժողովածուն բովանդակում է՝ խմբերգեր: Այդ թվում՝ եկեղեցական մի շարք երգերի բազմաձայն մշակումներ, նաև հեղինակային հոգևոր երկեր, ինչպես նաև աշխարհիկ ստեղծագործություններ: Ժողովածուն հավելված է Մաեստրոյի բազմաթիվ հետաքրքրական լուսանկարներով, որոնք ներկայացնում են ոչ միայն Մեյխանեճյանի կյանքը և գործունեությունը, այլ նաև ժամանակի Հայաստանյան բազմաբովանդակ մշակութային և եկեղեցական կյանքը:*

*2016 թ. Մաեստրոն այցելելով հայրենիք՝ իրագործեց իր վաղեմի ցանկությունը՝ ամբողջությամբ ձայնագրելով իր հեղինակած բազմաձայն պատարագը Երևանի գլխավոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգչախմբի կատարմամբ:*

*Ստորև ներկայացնենք մեկ հատված «Խորէնեան պատարագ»-ի «Բարեխօսութեամբ» շարականից (5. էջ 6): Նշենք նաև, որ «Խորէնեան Պատարագը» օրիգինալ ստեղծագործություն է, այսինքն պատարագի մեղեդիները քաղված են ոչ թե ավանդական աղբյուրներից, այլ հորինված են հեղինակի՝ Խորեն Մեյխանեճյանի կողմից: Ուշագրավ է «Բարեխօսութեամբ» շարականի բազմաձայն կերտվածքը: Հեղինակը գործի է դրել իմիտացիոն սկզբունքը՝ մասնավորապես շարականի թեման շարադրված է խառը քառաձայն (BASS. TENOR. ALT. SOPRANO) երգչախմբի ձայների վերընթաց կվարտա-կվինտային հաջորդականությամբ խմբերգային ֆուգատոյի ձևով: Նույն այս թեման շարականի կուլմինացիայում ծավալվում է նաև եռաձայն կանոնիկ նմանակման միջոցով (5. էջ 8): Նմանակումային սկզբունքն այս շարականում մեր կարծիքով նպաստում է խնկարկության ծեսի հետզհետե մեծացող և նույն գաղափարով համակված մարդկանց թափորի պատկերի ստեղծմանը:*



# Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին




## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ


1. //Հայրենիքի ձայն, Եր., 1975 թ., մարտի 19, թիվ 12: //Hayreniqi dzhayn, Yer., 1975 th., marti #19, 12.
2. //Коммунист., Ереван., #43., 20.02.1972. //Kommunist., Yerevan., #43., 20.02.1972.
3. *Ասագեան Ֆ.,* «Իրականացած Խոստում մը», «The Songs of My Life», «Կեանքիս Երգերը», Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի Արեւելեան Թեմ, Նիւ-Եորք, 2007 թ.: *Awagean F.,* “Irakanatzats Khostum m”. “The Songs of My Life”, “Keanqis Erger”, Arajnorduthiwn Hayotz Amerikayi Arewelean Them, Niw-Eorq, 2007 th.
4. *Ռէիսեան Ժ.,* «Սուրբ Պատարագը եւ Հայկական Պատարագի զարգացումն ու բազմաձայն տարբերակները», Բերիոյ Հայոց Թեմ, «Տաթեւ» Հայագիտական տարեգիրք, 1, Հալէպ, 2008 թ.: Rejisean Zh., “Surb Patarag’ ew Haykakan Pataragi zargatzumn u bazmadzhayn tarberakner”, Berioy Hayotz Them, “Tathew” Hayagitakan taregirq, 1, Halejp, 2008 th.
5. «Խորէնեան Պատարագ»: “Khorejnean Patarag”.



***Բանալի-բառեր.*** *«Խորէնեան Պատարագ», Խորեն Մեյիանեճյան, Բազմաձայն Պատարագ, Վազգեն Ա կաթողիկոս:*

***Ключевые слова:*** *“Хоренян Патараг”, Хорен Мейханеджян, многоголосная Литургия, католикос Вазген I.* ***Keywords:***

*"Khorenian Patarag", Khoren Mekanejian, polyphonic Liturgy, Catholicos Vazgen I.*



**Տեղեկություններ հեղինակի մասին.** ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԷՄՄԱ (ծ. 2000 թ., ք. Երևան): 2014-2018 թթ. սովորել է Երևանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական քոլեջի խմբավարության բաժնում: 2018 թվականից ուսումը շարունակել է՝ Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի խմբավարության բաժնում՝ պրոֆեսոր Դ. Ղազարյանի մասնագիտական դասարանում: 2018 թվականին աշխատանքի է անցել Երևանի Ստեփան Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոցում, որպես կրտսեր երգչախմբի խմբավար: 2021 թվականից ղեկավարում է «Լուսէ» մանկական երգչախումբը:

**Сведения об авторе:** АРУТЮНЯН ЭММА (род. 2000, Ереван). В 2014-2018 гг. училась на отделении хорового дирижирования в Ереванском музыкальном колледже им. Арно Бабаджаняна. В 2018 г. продолжила учебу в Ереванской государственной консерватории им. Комитаса, на кафедре хорового дирижирования, в классе проф. Д. Казаряна. С 2018 года работает младшим хормейстером в Ереванской музыкальной школе им. Степана Джрбашяна. С 2021 года руководит детским хором «Лусэ».

**Information about the author:** EMMA HARUTYUNYAN In 2014-2018 she was a student at the Department of Choral Conducting at Babajanyan College of Music in Yerevan. From 2018 she has been studying at Yerevan State Komitas Conservatory, at the Department of Choral Conducting, in professor D. Ghazaryan's class. Since 2018 she has been working as a junior conductor at Stepan Djrbashian Music School in Yerevan. Since 2021 she is the conductor of Luseh Children's Choir.



## *Резюме*

Студентка 4-го курса бакалавриата ЕГК *Эмма Арутюнян.— “Хормейстер Х. Мейханеджян (жизнь и творчество)”.*

В статье автор обращается к жизни и творчеству известного хормейстера, композитора, второго дирижера Государственной академической капеллы Армении, заслуженного ар - тиста Арм.ССР Хорена Мейханеджяна. Рассматривается небольшой раздел из Литургии Хорена Мейханеджяна, темы которой не являются каноническими и принадлежат автору.

## *Summary*

Musicologist, 4ed-year student at the Yerevan State Conservatory after Komitas *Emma Harutyunyan. - “Conductor Khoren Mekanejian. Life and Work”.*

The article refers to the life and work of Khoren Mekanejian, a renowned composer, second choirmaster of the State Academic Cappella of Armenia, Honored Artist of the Republic of Armenia. A detailed study of a fragment of Patarag (the Liturgy) is presented, where non-canonical themes by the composer are used.